# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Enigma Systemy Ochrony Informacji Sp. z o.o. -ն ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-Պ-23/40 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | ENIGMA SOI Ltd | ENIGMA SOI Ltd | TPT v.2 | ENIGMA SOI Ltd | 2. Էլեկտրոնային շղթան ունի հետևյալ տեխնիկական բնութագիրը. • ամբողջական կոշտ պատյանով կամ մասնակի կոշտ պատյանով և ռետինե ժապավենով է. • պատյանը պլաստմասե կառուցվածքով և մետաղական ներդիրներով կամ մասնակի պլաստմասե կառուցվածքով է. ռետինե ժապավենը՝ օպտիկական անվտանգության լարով և մետաղական ներդիրներով է. • շղթան հիպոալերգեն և սերտիֆիկացված է, հակահարվածային է, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | համապատասխանում է IP68 ստանդարտին. • շղթան ունի արտադրող երկրի ոլորտային կամ միջազգային կոնկրետ ստանդարտին համարժեք ստանդարտով սերտիֆիկացում. • շղթայի աշխատանքային թույլատրելի ջերմաստիճանը -15°C-ից +55°C-ի միջակայքում է. • էլեկտրոնային շղթան անձի վերջույթներին ամրացնելու չափի կարգավորումը՝ 3 ֆիքսված չափերով է՝ մեծ, միջին և փոքր. • քաշը՝ առավելագույնը 250 գրամ է. • մարտկոցի աշխատանքը (սարքի օգտակար օգտագործման ժամկետ)՝ առնվազն 2 տարի է. • մարտկոցի ամբողջական լիցքով աշխատանքի տևողությունը՝ առնվազն 24 ժամ է. • էլեկտրոնային շղթան ունի «GSM, նվազագույնը 3G»-ի, «RF»-ի, ինչպես նաև արբանյակային տեղորոշման համակարգի օգտագործման հնարավորություն, որոնցից առնվազն մեկի միջոցով Էլեկտրոնային շղթան կարող է տվյալներ փոխանակել կառավարման համակարգի հետ. • Էլեկտրոնային շղթայի տեղորոշումը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կատարվում է հետևյալ տեղորոշման համակարգերով՝ GPS, A-GPS, GLONASS. • կառավարման համակարգում էլեկտրոնային շղթայի մասին ընթացիկ տվյալներ ստանալու նպատակով օգտագործվում են սենսորային տվիչներ (պատյանի կամ շղթայի բացման, վնասման, սահմանված տարածքը լքելու, մարտկոցի թույլատրելի նվազագույն լիցքաթափման կամ կապի կորստի դեպքում համապատասխան տվյալներ ստանալու համար). • էլեկտրոնային շղթայի մարտկոցի լիցքի և խախտումների վերաբերյալ նախազգուշացնող ազդանշաններ ազդարարելու համար՝ լուսային, ձայնային կամ թրթռացող (վիբրացիոն) ցուցիչներ. • տվյալների փոխանցման ժամանակահատվածը կարգավորվող է, առնվազն յուրաքանչյուր 30 վայրկյանը մեկ. • կապի խափանման դեպքում տվյալները պահպանվում են հիշողության մեջ և ուղարկվում կառավարման կենտրոն՝ կապը վերականգնվելուն պես. • տվյալների |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | փոխանցման խափանման դեպքում ապահովվում է ազդարարում կառավարման համակարգում՝ համապատասխան հաշվետվության ինքնաշխատ ներկայացմամբ. • ապահովված է կառավարման համակարգին ժամանակագրական տեղորոշման, ինչպես նաև տարածքների սահմանման և դրանցում գտնվելու ժամանակագրության հաշվետվությունների, իսկ խախտումների դեպքում համապատասխան ազդանշանների փոխանցման հնարավորությամբ, որը կարող է ապահովվել նաև լրացուցիչ տրամադրվող շարժական մոդուլի միջոցով. • սարքը ապահովված է ինտերնետային և հեռախոսային կապով՝ Հայաստանի Հանարապետությունում գործող օպերատորի SIM քարտով, որը հասանելի է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Սարքերը մատակարարվում են ներկայումս Պրոբացիայի ծառայությունում ներդրված e-Convict ծրագրին միացված և շահագործման համար պահանջվող |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | բոլոր կարգավորումներով և ծրագրային լրավցումներով ապահովված: Սարքերը նշված ծրագրին միանալու համար անհրաժեշտ բոլոր լուծումները և վճարները կատարում են մատակաարարի կողմից: Էլեկտրոնային շղթան ունի արտադրողի կողմից մշակված վեբ ծառայություն (API) կամ ծրագրային ապահովման մշակման հավաքածու (SDK) այլ կառավարման համակարգի հետ ինտեգրելու համար:: SIM քարտի սպասարկման պայմանները նախօրոք համաձայնեցնեցվելու են Գնորդի հետ: SIM քարտերը ձեռք են բերվելու մատակարարի կողմից: SIM քարտերի միջոցով տվյալների փոխանցման ծառայությունների ձեռք բերումը իրականացվելու է Գնորդի կողմից: Սարքը Գնորդին հանձնելուց հետո SIM քարտերը ձևակերպվելու են վերջինիս անունով և հանդիսանալու են Գնորդի սեփականությունը: Էլեկտրոնային շղթան տեղադրելու, շղթան բացելու կամ փակելու համար առաջին խմբաքանակի |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Enigma Systemy Ochrony Informacji Sp. z o.o. в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-Պ-23/40 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ձեռքբերման ժամանակ տրամադրվում է 5 միավոր (համալիր) համապատասխան ծառայողական գործիքներ: Ձեռքբերվող յուրաքանչյուր էլեկտրոնային հսկողության շղթայի համար լրացուցիչ (բացի հիմնական (լարով) սնուցող սարքից) տրամադրվում է ևս մեկ հատ շարժական սնուցման սարք, որը կարող է նախապես լիցքավորվել հոսանքի աղբյուրից և ամրանալով Էլեկտրոնային շղթայի վրա` լիցքավորել այն: Շարժական սնուցման սարքը • հակահարվածային է, համապատասխանում է IP44 ստանդարտին. • էլեկտրոնային շղթան ամբողջությամբ լիցքավորվում է ոչ ավել, քան 90 րոպեում: Էլեկտրոնային շղթայի հետ տրամադրվում է պահանջվող խմբաքանակի վեցապատիկի չափով ռետինե ժապավեն (2100 հատ)` ժապավենի չափսերը նախապես համաձայնեցնելով Գնորդի հետ: Ներկայացված ապրանքների համար տրամադրվում է երաշխիքային սպասարկում, որի ժամկետ է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | սահմանվում ապրանքների ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1 տարի: |